ՔՈՒՐԱԿՉԱՅԻ ԴԱՇՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Վ. Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

XIX դարը Ղարաբաղը դիմավորեց անչափ փոթորկոտ և տագնապալից պայմաններում։ Նախորդ դարավերջից ստանձնած բեռը ծանրանալով՝ գրեթե դառնում էր անտանելի։ Հայաշխարհն ապրում էր իր բազմադարյան պատմության թերևս ամենամռայլ, ստեպ-ստեպ առկայծող հույսերի և հուսալքման ժամանակաշրջանը։ Աղա Մահմադ խանի ավերիչ արշավանքները, Դաղըստանի Օմար խանի թալանչիական հարձակումները, գերեվարությունները երկրամասը վերածեցին ավերակույտերի։ Արտաքին անպաշտպանվածությանն ավելանում էր ներքին մղձավանջը. մի քանի տարիներ տևած երաշտը, դրանից բխող սովը, ժանտախտը, մահտարաժամերը Ղարաբաղը դարձրին կատարյալ Սոդոմ-Գոմոր։ Հայությունը ստիպված տարագրվելով իր պատմական հայրենիքից՝ ապաստան էր որոնում Շաքիում, Շիրվանում, Վրաստանում և այլուր։ Արտագաղթն իր չափերով նախատիպը չուներ։ Դրան գումարվում էր նաև բռնագաղթը։ Ղարաբաղի իրական տերերի և եկվոր Իբրահիմ խանի միջև տասնամյակներ շարունակ և փոփոխակի հաջողություններով ընթացող պատերազմներում հաղթողի դափնին ի վերջո բաժին հասավ Շուշիի նորաթուխ տիրակալին՝ «վերջնականապես ջնջելով հայոց հարցը Ղարաբաղում»[1]։ Իբրահիմին այժմ մնում է միայն փաստական հաղթանակին տալ իրավական ձևակերպում։ Իսկ պարտված հայ մելիքները լքելով հայրենի եզերքները և դառնալով աստանդական, ռուսաց կառավարության ցուցումով ի վերջո հանգրվանեցին Վրաստանում[2]։ Նրանք ոչ միայն իրենց հետ տարան Ղարաբաղի հայության մի մասը, այլև բնակչության նորանոր զանգվածներ գաղթեցնելու նպատակով նոր հաստատված տարածքներից[3] պարբերաբար հարձակումներ էին կատարում փրենց նախկին տիրույթների վրա, ձգտում ամայացնել երկիրը և Իբրահիմին զրկել տնտեսական հիմքերից։ Ղարաբաղի վերջնական հայաթափումը քաղաքական տեսանկյունից ձեռնտու լինելով Շուշիի խանին, տնտեսապես նրան կդարձներ ոչնչություն, քանի որ վերջինս կիշխեր խոպանացած մի երկրի, ասել է թե՝ ոչնչի։ Ահա թե ինչու խանի հակաքայլերի և իրենց երկրում ապրելու հայության կամքի դրսևորման պայմաններում մելիքները ունեցան միայն մասնակի հաջողություններ։ Չնայած սոսկալի նոսրացմանը, հայությունը մնում էր Լեռնային Ղարաբաղի միակ էթնիկական խումբը[4]։ Այդպիսին էր Ղարաբաղի ընդհանուր կացությունը, երբ դարասկզբին Ռուսաստանը կրկին օրակարգ մտցրեց Այսրկովկասում իր տի-

---

1 Լ ե ո , Հայոց պատմություն, հ. 4, Երևան, 1984, էջ 28։

2 Պավել Ա-ն, ընդառաջելով հայ մելիքների՝ ոչ առանց Հ. Արղությանի դիտությամբ կազմած խնդրագրին, 1799 թ. հունիսի 2-ին հատուկ հրովարտակով Ղարաբաղի մելիքներին հնարավորություն է տալիս ընդունել վրացական հպատակություն և իրենց բնակչությամբ մշտական բնակության վայր ընտրել Գուգարքը։

3 Վաքանդայի մելիք Ջումշուդը վրաց Գեորգի թագավորից ստացավ Լոռին, Գյուլիստանի մելիք Աբովը՝ Բոլնիսը, նրա եղբոր որդի մելիք Ֆրեյդունը՝ Բորչալուի մի մասը և այլն։ Մելիքների հույսերը՝ նոր հաստատված և հայահոծ տարածքներում ստեղծել խամսայի կարգավիճակով մի երկիր, մի շարք հանգամանքների բերումով ի դերեւ եղան։

4 Որոշ չափով մահմեդականներ էին միայն Շուշիում, ուր բնակություն էին հաստատել Փանահի և Իբրահիմի կողմից դաշտային շրջաններից տեղահանված իրենց ցեղակիցները՝ որոշ չափով պղծելով ի սկզբանե հայկական և միատարր հայաբնակ երկրամասի էթնիկական անաղարտությունը։

ռապետությունն ամրագրելու հարցը՝ «բայց ոչ այն վարդագույն և պատրանալից դույներով, որոնք նախորդ տասնամյակներին ուրվագծում էին այդ տիրապետությունը»[5]։

XVIII հարյուրամյակի վերջնագծից սկսած, Ռուսաստանը հրաժարվեց նկատերինյան ժամանակաշրջանի սուվորովների, պոտյոմկիններիի, զուբովների ազատական հովվերգությունից, ըստ որի այսրկովկասյան քրիստոնյաներին՝ վրացիներին և հայերին ներառելով ռուսաց գայիսոնի հովանու ներքո, շնորհվելու էր խամաճիկային, «դուստր» պետություններ ունենալու իրավունք՝ դառնալու համար ոչ միայն Այսրկովկասում Ռուսաստանի տիրապետության հաստատագրման հավատարիմ հենակետեր, այլև հարավային տարբ ջրեր մխրճվելու հուսալի ոստնյակներ։ Ռուսաստանի պաշտոնական հայեցակետի մարմնավորման մեջ վերջին դեր չէր վերապահվում և Ղարաբաղին, որի արտահայտությունն էր Թեկուզ և կայսրուհի Եկատերինային իշխաս Կ. Պոտյոմկինի հղած նամակի բովանդակությունը։ Նշելով Ղարաբաղում մելիքներից մեկի գլխավորությամբ հայկական պետություն ստեղծելու և այդ պետության շուրջը հայկական մյուս նահանգների սերտաման հրատապությունը, իշխանն ավելացնում է. «Այսպիսով Ասիայում կվերականգնվի մի քրիստոնեական պետություն՝ համաձայն Ձեր կայսերական մեծության խոստումների...»[6]։

Պավելյան, ապա ալեքսանդրյան Ռուսաստանը դիմադարձվելով այս քաղաքականությունից, ցրեց Հայերին և վրացիներին պատած պատրանքային սշուշը։ Սիայն դեռվից դիտելով Այսրկովկասի մի մասի հոշոտումը Աղա Մահմադ խանի հրոսակների կողմից, Ռուսաստանը տարածաշրջանը դրեց կատարված փաստի առջև։ Հայերն ու վրացիները ֆիզիկական բնաջնջման օրհասի ներքո ճարահատյալ դրեն պատրաստվում էին հրաժարվել ինքնավար պետություններ ստեղծելու գաղափարից և հաշտվել շարյաց փոքրագույնի՝ առանց հատուկ կարգավիճակի կայսրության տիրապետության մեջ մտնելու հետ, իսկ մահմեդական խաներն էլ, մասնավորապես Իբրահիմը, դեմ չէին լինի քաղաքական դաշնադրություններով իրենց իշխանապետությունը պահպանելով դառնալ կայսեր վասալներ և ստանալ նրա բարյացակամ հովանավորությունը։ Այս քաղաքականությունն իր նախնական արտահայտությունը գտավ Վրաստանի հանդեպ, որը 1801 թ. մանիֆեստով բռնակցվեց Ռուսաստանին՝ թաղելով 1783 թ. Գեորգևսկի դաշնադրության էությունը, որով Վրաստանի թագավորությունը պետք է ներառվեր Ռուսաստանի հովանու ներքո։ Այժմ ոչ միայն այդ թագավորությունը լուծարվեց, այլև արքայական տոհմի մեծ մասը ենթարկվելով նվաստացման՝ արտաքսվեց Վրաստանից, չնայած նվաճողին հատուկ փարիսեցիական ոճով մանիֆեստում շեշտվում էր Ռուսաստանի օժանդակությամբ իր դառը ճակատագրից Վրաստանի ազատագրման կարևորությունը, ուր իբր հիմնվում էր մի կառավարություն, որը «կկարողանար ամրապնդել արդարադատությունը, անձնական և կալվածական ապահովությունը և ամեն մեկի համար հայթայթել օրենքի պաշտպանությունը»[7]։

Ակնհայտ էր, որ Ռուսաստանը հետամտում էր ողջ Այսրկովկասը նվաճելու և գաղութացնելու նպատակը։ Այս պայմաններում արևելյան կեղծավորությունը յուրացրած, շրջահայաց և հեռատես Իբրահիմից պարտություն կրած Ղարաբաղի մելիքներին ոչինչ չէր մնում, քան աջակցել այդ քաղաքականությանը, իսկ հաղթողի դերում հանդես եկող Շուշիի խանին՝ Ռուսաստանի հետ կնքել վերջինիս վեհապետական իրավունքներն իր վրա տարածելի դաշնադրություն՝ պահպանելու համար հայկական Ղարաբաղի նկատ-

---

5 Բ. Ուլուբաբյան, Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երևան, 1994, էջ 172։

6 Армяно-русские отношения в XVIII в., т. IV, Ереван, 1990, с. 241.

7 В. Потто, Утверждение русского владычества на Кавказе, Тифлис, 1901, с. 39.

մամբ խանի և նրա ժառանգների տիրապետության անսասանությունը։ Նման դաշնադրությունը բխում է թե՛ Պարսկաստանի հարվածի տակ հայտնված Ղարաբաղի խանության, թե՛ Ռուսաստանի շահերից։

Նախքան 1804 թ. Պարսկաստանի դեմ պաշտոնական պատերազմի մեջ մտնելը, Ռուսաստանը գործուն քայլերի դիմեց իր դիրքերն Արևելյան Վրաստանի հարակից տարածքների վրա ամրագրելու ուղղությամբ։ Այսպես, 1803 թ. Ռուսաստանին կցվեց Միգրելիան։ Նույն թվի աշնանը ռուսական զորքերը Վրաստանի կառավարչապետ Պ. Ցիցիանովի[8] հրամանատարությամբ շարժվեցին դեպի Գանձակ։ Ռուսական արշավանքին մասնակցում էին նաև հայ և վրացի կամավորներ, ինչպես նաև Գանձակի և նրա շրջակայքի հայ ազգաբնակչության մի մասը։ Հայ կամավորական ուժերին առաջնորդում էր Լոռիում հաստատված Վարանդայի մելիք Ջումշուդ Մելիք-Շահնազարյանը։ Ռուսական բանակում էին գտնվում նաև Ներսես Աշտարակեցին և Թիֆլիսի հայոց հոգևոր առաջնորդ Հովհաննես Գեղարդակիրը։ Մի խոսքով, հայերի համակրանքն այս անգամ ևս ռուսների կողմն էր, իսկ Իբրահիմը դաշինք կնքեց իր վաղեմի թշնամի Գանձակի Ջավադ խանի հետ՝ կասեցնելու համար Ցիցիանովի առաջխաղացումը։ Սակայն այդ դաշինքը չփրկեց Գանձակի խանին և դեկտեմբերին քաղաքը գրավվեց։ Շուշի՝ խանին մնում էր միայն թալանչիական ասպատակություններ կատարել Գանձակի արդեն ռուսացած տիրույթների ուղղությամբ՝ զանց առնելով Ցիցիանովի սպառնալիքները։ Թվում է, թե հերթը հասել էր Ղարաբաղի խանության գրավմանը։ Սակայն Թիֆլիսի կառավարչապետը նպատակահարմար է գտնում այդ հարցը լուծել խաղաղ ճանապարհով՝ հիմնական ուժերը կենտրոնացնելով Երևանի ուղղությամբ։ Վերջինս գրավելու և Արաքս գետը ռուս-պարսկական սահմանագիծ դարձնելու նպատակով 1804 թ. հունիսին ռուսական առաջապահ զորամասերը Լոռի-Փամբակով հասան Գյումրի՝ հաղթական ճակատամարտ տալով պարսկական գերակշիռ ուժերի դեմ։ Այսպես սկսվեց 1804—1813 թթ. ռուս-պարսկական պատերազմը։

Հասնելով Գյումրի՝ Ցիցիանովը շարժվեց դեպի Էջմիածին, ուր դիրքավորվել էր Աբաս-Միրզայի բանակը։ Ռուսական կորպուսը շրջանցելով Էջմիածինը, հունիսի վերջին գրավեց Քանաքեռը և պաշարեց Երևանը։ Սակայն վճռական գրոհի անցնելու փոխարեն ռուսաց հրամանատարը սկսեց բանակցություններ վարել Երևանի Մամադ խանի հետ՝ հնարավորություն տալով Աբաս-Միրզային վերադասավորելու իր ուժերը և օգնության հասնելու վերջինիս։ Փամբակի լեռնանցքը պարսկական ուժերի կողմից փակվելու սպառնալիքը, ինչպես նաև պարենի և ռազմամթերքի խիստ պակասը[9] հարկադրեցին ռուսներին դադարեցնել Երևանի բերդի պաշարումը և վերադառնալ Թիֆլիս։

---

8 Պավել Ցիցիանովը (վրաց որոշ դրականության մեջ Պավլե Ցիցիշվիլի) չնայած ազգակցական կապերով կապված էր վրացական թագավորական տան հետ, սակայն Վրաստանը հպատակեցնելու միջոց է համարում արքայական ընտանիքի արտաքսումը երկրից և այդ ծրագիրը նա իրագործեց արտակարգ դաժանությամբ (մանրամասն տե՛ս Акты, собранные Кавказской археографической комиссиею (այսուհետև՝ АКАК), т. II, էջ 19[illegible], 199, 201, 210, В. Потто. Закавказская война, т. II. СПб, 1885; Լեո, նշվ. աշխ. և այլն։ Իր տոհմի դահիճն արտաքուստ բարյացակամություն դրսևորելով ռուսական նվաճումները տարփողող հարուր գործիչների նկատմամբ, օգտագործեց նրանց հեղինակությունը՝ հայությանը մասնակից դարձնելու իր բռնաղափթմանը։ Սակայն քամելով հայոց կարողությունը, մսխելով այն, ճզմած կիտրոնի նման դեն շպրտեց՝ դրսևորելով մոլի հայատյացություն։

9 Ցիցիանովի բանակի համար պարենի և ռազմամթերքի փոխադրման հանձնառուն էր Մելիք Արովի որդի Ռոստոմ բեկը, որը 2 անգամ մեծ ջանադրությամբ և արտակարգ հմտությամբ կատարել է իր առաքելությունը՝ փրկելով ռուսական բանակը անխուսափելի կործանումից։ Սակայն երրորդ անգամ նրա ղեկավարած փոքրիկ ջոկատը Փամբակում ենթարկվեց պարսկական ստվարաթիվ զորքերի հարձակմանը։ Վիրավոր Ռոստոմը գերվում է, տարվում Թավրիզ, ուր սպանվում է Աբաս-Միրզայի հրամանով (տե՛ս Լեո, նշվ. աշխ., էջ 229—231)։

Մինչ այդ, 1804 թ. գարնանից սկսած, Իբրահիմը դիմադարձ կատարեց Ռուսաստանի հանդեպ իր որդեգրած քաղաքական վարքագծից։ Բանն այն է, որ երկյուղելով պարսիկների վրեժխնդրությունից[10], նա սկսեց ապահովության հպատակություն որոնել Ցիցիանովի մոտ։ Փոխարենը վերջինս խանից պահանջեց անխախտելի հավատարմություն, Շուշիի բերդը տրամադրել ռուսական զորքերին, պատանդ տալ իր ավագ որդուն և, որպես հպատակության երաշխիք, տրամադրել 10 հազար ոսկի և ավելացրեց. «Ի փոխադարձություն այս ամենի, ամենաբարձրագույն, ամենակարող մեծ թագավորը հաստատում է ձեզ և ձեր տոհմը խանական կոչումի մեջ բարձրագույն հրովարտակով, բոլոր իրավունքներով և առավելություններով»[11]։ Սակայն Իբրահիմն իր անկախությունից հեշտ հրաժարվողը չէր։ Մի կողմից քաղաքական սիրախաղ սկսելով Ռուսաստանի պաշտոնական ներկայացուցչի հետ, մյուս կողմից՝ ժամանակ շահելու միտումով հետևում էր պարսկական զորքերի գլխավոր հրամանատարի ուղղությանը։ Եվ երբ հստակեցրեց վերջիններիս՝ Երևանի ճակատով գործելու փաստը, «խանի հպատակական ջերմեռանդությունը Ռուսաստանի վերաբերմամբ սկսեց թուլանալ մինչև այն աստիճան, որ Ցիցիանովը պատասխան չստացավ նրանից և այդպես էլ վեր կացավ և Երևանը առնելու գնաց»[12]։

Երևանյան անհաջող արշավանքից հետո Ցիցիանովը վերսկսեց բանակցությունները Շուշիի խանի հետ, այդ նպատակով Իբրահիմի մոտ ուղարկելով մայոր Լիսանևիչին։ Վերջինս խանին պետք է հայտներ ռուսական զորքերի գլխավոր հրամանատարի կամքը՝ հանդիպել Գանձակում և կնքել դաշնագիր։ Հանգամանքներն Իբրահիմին թելադրում էին տեղի տալ և ընդառաջ գնալ Ռուսաստանի ցանկություններին։ Բանն այն է, որ պարսիկների հրահրմամբ նրա դեմ ապստամբել էր որդիներից մեկը։ Ֆաթալի շահը դրանով վերջին փորձն էր կատարում ստիպել Իբրահիմին՝ դիմադարձվել Ռուսաստանի հետ տեսանելի մերձեցումից ու հակվել դեպի Պարսկաստանը։ Շուշիի խանը կասկածանքով է վերաբերվում նաև խանությունում իր՝ անպատիժ իշխելու շահի հավաստիացումներին ու Գանձակի խանի ճակատագիրը չկիսելու և խանական կարգավիճակը պահպանելու համար ընդունում է Ցիցիանովի պայմանները։ Սակայն պատրվակ դարձնելով ընթացող ապստամբության պատճառով իր երերուն դիրքը, ինչը բացառում է նրա՝ Ղարաբաղից տևական ժամանակով բացակայելու հնարավորությունը, Շուշիի տիրակալը դաշնագրի կնքման վայր առաջարկեց ռուսական տիրապետության և խանության միջև գտնվող սահմանագուխը։ Առաջարկությունն ընդունվեց։

Ավելի քան 190 տարի առաջ, 1805 թ. մայիսի 14-ին, պատմական Գետաշենից ոչ շատ հեռու, Քուրակչայ (Կուրակն) գետի ափին Վարանդայի մելիք Ջումշուդ Մելիք-Շահնազարյանի և Թիֆլիսի ու Գանձակի հայոց հոգևոր առաջնորդ Հովհաննես Գեզարդակրի ներկայությամբ Ցիցիանովը և Իբրահիմ խանը ստորագրեցին 11 հոդվածից բաղկացած մի պայմանագիր, որով, փաստորեն, Ղարաբաղը մտավ Ռուսաստանի կազմը։ Դաշնագրի առաջին հոդվածով Իբրահիմը իր և իր ժառանգների ու հաջորդների անունից հրաժարվում էր «Պարսկաստանից կամ մի այլ պետությունից վասալական կամ առհասարակ ուրիշ որևէ տիտղոս ունեցող որևէ կախում ունենալուց» և համառուսական կայսերական գերագույն իշխանությունից բացի չէր ճանաչում «ուրիշ մի ինքնակալություն»[13]։ Հաջորդ հոդվածով «Նորին կայսերական մեծությունը, ընդունելով նորին բարձրաստիճանության կողմից տված անկեղծ խոստումը, հավասարաչափ խոստանում՝ հուսադրում է իր կայսերական խոսքով իր և իր հաջորդների անունից շնորհն ու բարեխնամությունը Շուշու և Ղարաբաղի

10 Իբրահիմը բոլոր հիմքերն ուներ Շուշիում Աղա Մահմադ խանի սպանության պատճառները որոնելու նրա վարքագծի մեջ։

11 AKAK, II, № 1420.

12 Լ ե ո, նշվ. աշխ., էջ 247։

13 Լ ե ո, նշվ. աշխ., էջ 249։

Իբրահիմ խանից և նրա ժառանգներից, ինչպես իրեն հավատարիմ հպատակների, երբեք չեն խլվի, որին իբրև ապացույց նորին մեծությունը տալիս է իր կայսերական երաշխիքը, թե նորին բարձրաստիճանության և նրա ժառանգների ներկա կալվածների սեփականությունը պահպանված կլինի»[14]։ Երրորդ հոդվածով Իբրահիմ խանը, «իսկ նրանից հետո նրա ավագ որդին և այդպես շարունակ, որդոց որդի, ըստ ավագության պարտի, մտնելով խանական իշխանության մեջ, կստանան Վրաստանի կառավարչապետի միջոցով խանության կայսերական հաստատությունը և իշխանության նշանը, որ բաղկացած կլինի պետական կնիքով վավերացված հրովարտակից»[15], որը ստանալուց հետո նոր խանը պարտավոր է ռուսական կայսրությանը տալ հավատարմության երդում։ Այնուհետև խանը պարտավորվում էր առանց Վրաստանի կառավարչապետի համաձայնության հարաբերություններ չունենալ հարևան պետությունների հետ[16]։ Մյուս՝ 5—11-րդ հոդվածները վերաբերում են Ղարաբաղում Իբրահիմի և նրա հաջորդների խանական կարգավիճակի պահպանման կայսերական բարեհաճությանը, ներքին կառավարումը, դատը և դատաստանը, կալվածքների եկամուտները խանի կամքին թողնելուն, Շուշիի բերդում 500 ռուս զինվորներ և սպաներ տեղավորելուն, կայսերական գանձարանը խանի կողմից ամեն տարի 8 հազար ոսկի մուծելուն և այլն[17]։ Դաշնագրի սկզբունքները իրավական ձևակերպում ստացան Գյուլիստանի հաշտության պայմանագրում, որով Ղարաբաղից բացի Պարսկաստանը մեկընդմիշտ հրաժարվում և Ռուսաստանի մշտնջենական սեփականություն էր ճանաչում Դերբենդի, Դուբայի, Բաքվի, Թալիշի, Շիրվանի, Շաքիի, Գանձակի խանությունները, Վրաստանը, Դաղստանը և Շորագյալի գավառը։

Քուրակչայի դաշնագրի ոչ քննական վերլուծությունն անդամ ակնհայտ է դարձնում մի պարզ ճշմարտություն. այստեղ բոլորովին մոռացված էր Ղարաբաղի իրական և բնիկ տերը՝ հայությունը, որի թվակազմը Ցիցիանովի իսկ խոստովանությամբ, մինչև XVIII դ. վերջերը, այսինքն՝ Աղա Մահմադ խանի արշավանքը, տատանվում էր 40—60 հազար ընտանիքների սահմաններում[18]։ Մոռացված էր մի ժողովուրդ, որն իր քաղաքական ազատության հույսն ավելի քան մեկ դար լծորդեց ռուսական առաջխաղացման հետ, անմնացորդ նվիրաբերվեց Այսրկովկասում Ռուսաստանի դիրքերի ամրապնդմանը, հրավիրեց նրան տարածաշրջան, իսկ վերջինս էլ ազատության և անկախության ոգեկոչումներով և բազմաթիվ խոստումներով բարձրացրեց հայության հերոսական տրամադրությունը, ազատագրական տենչը՝ պայքարելու համար եկվոր խանի դեմ։ Այժմ Ռուսաստանը դիմադարձ կատարեց իր հայեղակետից՝ հաստատագրելով անօրենի տիրապետությունը հայահոծ մի տարածքի վրա[19] և դառնալով այդ տիրապետության պահպանման երաշխավորն այն ժամանակ, երբ Քուրակչայից ընդամենը մի քանի տարի առաջ Ռուսաստանը Ղարաբաղի իրական տերեր էր համարում հայ մելիքներին, խոստանում

---

14 Նույն տեղում։

15 Նույն տեղում։

16 Նույն տեղում։

17 Նույն տեղում, էջ 250, 251։

18 Եթե հաշվի առնենք, որ հայությունն այդ ժամանակ և հետագա հարյուրամյակում ապրում էր գերդաստաններով, որոնցից յուրաքանչյուրում միջին հաշվով կար 10—15 անդամ, ապա ընտանիքների՝ վերը նշված թվաքանակի կրկնակի չափազանցության դեպքում անդամ Ղարաբաղի լեռնային հատվածում պետք է որ ապրեր 300 հազարից ոչ պակաս բնակչություն, որի մի մասը, ինչպես նկատեցինք, ծվեն-ծվեն տարագրվել էր այսրկովկասյան տարբեր ծագեր։ Միայն Շամախու խանության սահմաններն է տարագրվել 8 հազար արցախահայ ընտանիք։

19 Քուրակչայի պայմանագրի 5-րդ հոդվածում ուղղակի նշված է. «Նորին կայսերական մեծությունը... իր և իր հաջորդների անունով խոստանում է... 2) բարձրաստիճան Իբրահիմ խանին և նրա տան ժառանգներին և հաջորդներին պահպանել անպատճառ Շուշու խանության վրա» (Լ ե ո, Նշվ. աշխ., հ. IV, էջ 250)։

նրանց միջոցով վերականգնել հայկական պետականությունը։ Եվ համահայկական առաքելություն ստանձնած արցախահայությունը մաքառեց՝ թիկունքում՝ զգալով իր նկատմամբ Ռուսաստանի «հմամակրալից» շնչառությունը։ Սակայն քաղաքականությունը երբեք չի քաշվել ստորությունից ու նենգությունից, և այնքանդրյան Ռուսաստանը հավատարիմ մնաց դրանց՝ պաշտպան կանգնելով եկվոր մի Բուրք խանի, որի տոհմը Ղարաբաղում ուներ միայն կես դարվա, այն էլ տանտեր ժողովրդի դեմ երկարատև և անողոք պայքարի պատմություն։

Ինչ խոսք, Շուշիի խանի և ռուսաց կայսեր քաղաքական շահերն այստեղ համընկնում են։ Իբրահիմն իր և իր հաջորդների համար հայաշխարհում օրինականացնում է մի իշխանություն, որը ջնջում է հայ հողատիրությունը, ընդլայնում հայոց ազգային և կրոնական զգացմունքները վիրավորող թուրք և մուսուլմանական հողատիրության ձևերը։ Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա նա անարյուն, զուտ քաղաքական հաղթանակով ամրակայվեց ռազմավարական մի տարածքում, որը Ցիցիանովի իսկ խոստովանությամբ ոչ միայն Վրաստանը կապում էր Բաքվի հետ, այլև «իր դիրքով կարող է համարվել Ադրբեջան կամ, որ նույնն է, Պարսկաստան մտնող դռներ և երկուսին էլ պիտի երկյուղի մեջ պահի (ընդգծումը մերն է—Վ. Հ.)»[20]։

Քուրակչայի դաշնագիրն ազդարարեց Ղարաբաղի խանի [21] և հայ մելիքների միջև ավելի քան 50 տարի ընթացած պայքարի ավարտը և վերջիններիս կատարյալ ջախջախումը։ Պայմանագիրն արմատախիլ արեց Արցախ աշխարհում պահպանված հայ ժողովրդի քաղաքական ինքնորոշման վերջին ոստը՝ թաղելով Խամսան և պատմական այս փուլում հայոց պետականության վերականգնման հարցը։ Ամենազավեշտականն այն էր, որ դաշնագրի կնքման պահին Իբրահիմի կողմից մասնակցում էին Աղվանից կաթողիկոս Իսրայելը, իսկ ռուսների կողմից՝ արդեն նշված Մելիք Ջումշուդը և Հովհաննես Գեղարդակիրը, որոնք կարծես թե բերվել էին Քուրակչայ՝ ականատես դարձվելու հայոց կորստյան գրին։ Թթե առաջինը տնսակցության վայր էր եկել ոչ թե «հայկական իշխանության վերջին բեկորներից գեթ մի բան փրկելու, այլ... իր եկամուտը պաշտպանելու համար»[22], ապա Վարանդայի մելիքը բավարարվեց Իբրահիմ խանից իր որդուն ու թոռանը ստանալով, իսկ Գեղարդակիրը՝ իր առաջնորդական հարցերը կարգավորելով։ Ինչ վերաբերում է Խամսայի մյուս մելիքներին[23], ապա նրանք հիմնականում զբաղված էին իրենց

20 Նույն տեղում, էջ 252։ Այստեղ «Ադրբեջանը» նույնացված է Պարսկաստանի հետ։ Խոսքը վերաբերում է ոչ թե հետագայի արհեստածին, այսպես կոչված, Հյուսիսային Ադրբեջանին, այլ բուն Ադրբեջանին՝ Ատրպատականին, որը Պարսկաստանի հյուսիսային բաղադրամասն է։

21 Աղբերի պատմաբանները տարփողել և այսօր էլ տարփողում են այն խեղաթյուրանքը, թե քանի որ Քուրակչայի պայմանագիրը կնքվել է Շուշիի թուրք Իբրահիմ խանի մասնակցությամբ, ապա Ղարաբաղի մահմեդական-ադրբեջանական (որ նույնն է՝ թուրքական) խանությունն է մտել Ռուսաստանի կազմը, մոռանալով ոչ միայն Ղարաբաղի իրական տեր մելիքներին, որոնք պայմանագրի կնքման նախօրյակին դարձել էին աստանդական, այլև խանության ջախջախիչ մեծամասնություն կազմող հայությանը։ Թթե առաջնորդվելու լինենք այս անհեթեթ տրամաբանությամբ, ապա, ասենք, IX—XI դդ. բյուզանդական կայսրությունը չի կարելի դիտել հունական պետություն, քանի որ այստեղ շուրջ 2 դար անընդմեջ իշխում էր հայկական հարստությունը։ Նույնն է՝ Կիևյան Ռուսիան համարել նորմանական երկիր, կամ Եգիպտոսի փոխարքայությունը՝ ալբանական տարածք, քանի որ առաջինի հիմնադիրը Ռյուրիկ Նորմանացին էր, իսկ երկրորդը կառավարվում էր ալբանացի Մուհամեդ Ալու և նրա ժառանգների կողմից։

22 Լ ե ո, նշվ. աշխ., էջ 258։

23 Միայն Գյուլիստանի մելիք Աբովն էր, որ հեռվից փորձում էր ինչ-որ բան պոկել Քուրակչայից։ Սակայն նրան արգելված էր վերադառնալ հայրենիք, քանի որ առանց նրա Վրաստանի հարավային մասը վտանգված կլիներ։ Այսպես, Խամսայի մելիքը պետք է պաշտպաներ մի օտար տարածք այն ժամանակ, երբ Քուրակչայի մի վրանում օրինականացվում էր իր պապենական տիրույթի օտարումը։

բաժին հասած նոր տիրույթներում իրար միջև հին հակասությունները նորացնելով և հայրենիքի բախտը տնօրինելու պահին հանդես շբերին հավաքական կամք՝ մեկ անգամ ևս դրսևորելով անմիաբանություն, քաղաքական արդարացված և տրամաբանված պահանջներն ինքնուրույն առաջադրելու անընդունակություն, իրենց իրավունքները պաշտպանելու անկարողություն։

Զավեշտական պետք է համարել և այն, որ ավելի քան մեկ դար քաղաքական կապեր հաստատելով ռուսական տարբեր միապետների և նրանց շրջապատի հետ, գործուն աջակցություն ցուցաբերելով Այսրկովկասում և, մասնավորապես, Ղարաբաղում Ռուսաստանի տիրապետության հաստատագրմանը, հայ մելիքները ոչ միայն չստացան որևէ վարձատրություն կամ թեկուզ ձևական շնորհ, այլև նրանց վաստակած հասանելիքը բաժին ընկավ մելիքների հակառակորդ, Ռուսաստանի առաջխաղացման դեմ պարբերաբար առճակատող և միայն վերջին պահին հարկադրաբար նրա վեհապետությունը ընդունող Իբրահիմին։ Օրինակ, Ցիցիանովը, միջնորդելով Ալեքսանդր կայսեր առջև Ղարաբաղում Ռուսաստանի տիրապետության հաստատմանն ակտիվորեն մասնակցություն ցուցաբերած անձանց պարգևներ շնորհելու հարցում, խնդրում է Իբրահիմ խանին տալ գեներալ-լեյտենանտի, իսկ որդիներին՝ գեներալ-մայորի կոչումներ, զգալի ոճիկ։ Նրա խնդրանքը բավարարվում է։ Այստեղ էլ ոչ մի խոսք՝ Ղարաբաղի մելիքների մասին։ Եվ ինչպես ցույց կտա դեպքերի հետագա ընթացքը, այսքանից հետո էլ ոչ թե Շուշիի «վարձատրված» խանը, այլ Ղարաբաղի մելիքները և, ընդհանրապես, հայերն էին շարունակում հավատարմություն ցուցաբերել Ռուսաստանի նկատմամբ։ Իսկ դեպքերը երկար սպասեցնել չտվեցին։

Քուրակչայի դաշնագրից կարճ ժամանակ անց պարսկական ուժերը նորից շարժվեցին դեպի Ղարաբաղ՝ «մոլորյալ» խանին դարձի բերելու և ռուսներին Շուշիից դուրս քշելու մտադրությամբ։ Իբրահիմը ոչ միայն դիմադրություն ցույց չտվեց, այլև պատրաստվեց կրկին ընդունել Պարսկաստանի հպատակությունը և նրա օգնությամբ վերսկսել պայքարը «անհավատ ռուսների» դեմ՝ միաժամանակ առերես շարունակելով օգնություն հայցել Ցիցիանովից։ Վերջինս խանից պահանջում է հավատարիմ մնալ դաշնադրի ոգուն և կատարել ստանձնած պարտավորությունները[24]։ Սակայն դիխավոր հրամանատարի այս ակնկալությունները չիրականացան, և նա ընկնելով ծանր կացության մեջ՝ կրկին հիշեց իր կողմից մոռացության մատնված հայերին. «Մի՞թե դուք, Ղարաբաղի հայե՛ր, որ մինչև այժմ փառավորված էիք ձեր քաջությամբ, փոխվել եք այժմ, երբ ձեր տիրողը՝ Ղարաբաղի բարձրաստիճան Իբրահիմ խանը, մտել է ռուսական կայսրության մշտնջենական հպատակության մեջ... Ինձ հայտնի է Ձեր վաղեմի քաջությունը, ուստի և կանչում եմ ձեզ մեծ և ամենազոր թագավոր կայսրի սրբազան անունով՝ միանալ նրա մեծափառ և անպարտելի համառուսական զինվորներին՝ ընդդեմ պարսկական զորքերի, որոնք ձեռնարկել են ավերել Ղարաբաղը և հափշտակել ձեր անձնական կայքը»[25]։ Ցիցիանովի սմբարտավանությունը սահման չէր ճանաչում և հեռու էր դիվանագիտական դիմելաոճից։ Նա մի կողմից օգնություն էր հայցում հայերից, իսկ մյուս կողմից շահարկելով նրանց ճարահատյալ վիճակը՝ խփում տեղաբնիկների ազգային ինքնատիրությանը, Ղարաբաղի հայությանը նորից հիշեցնում Իբրահիմի «մշտնջենական» տերունական իրավունքը նրանց վրա։ Վերջինս էլ առաջվա նման պետք է պայքարեր ոչ թե անկախ կամ կիսանկախ պետություն ստեղծելու, այլ միայն «անձնական կայքը» պարսկական հափշտակումից փրկելու համար։ Վերջում նամակագիրը հայերին կոչ էր անում միանալ գնդապետ Կարյագինի հրամանատարությամբ Ղաբաբաղ ուղարկվող ռուսական զորքերին[26]։ Սակայն «ամայացած երկրի մեջ այլևս չկային ո՛չ հին մարտիկները, ոչ էլ նրանց

24 Մանրամասն տե՛ս AKAK, II, № 1444։

25 Նույն տեղում, թ. 1714։

26 Նույն տեղում։

անվնհեր առաջնորդները՝ մելիքները։ Ոմանք պառկած էին դերեզմաններում, մյուսները տնավեր էին դարձել հենց Իբրահիմ խանի ձեռքով, իսկ մեծամասնությունը բոլորովին թողել էր հայրենիքը, ցրվել հարևան իշխանությունների մեջ։ Հին հարգելի տոհմերի տեղ գյուղապետեր էին նշանակված հասարակ ծագման տեր մարդիկ, որոնք ժողովրդի աչքին ամենափոքրիկ հեղինակություն անգամ չունեին և որոնք առաջիններից զանազանելու համար կոչվում էին «խանական մելիքներ»[27]։

Այս պայմաններում անգամ արցախահայերը նորից նետվեցին մարտի։ Հատկապես անօրինական սխրագործություններով աչքի ընկավ Ջրաբերդի Ղուսապատ գյուղի Հարություն յուզբաշու որդի Վանի Աթաբեկյանը, որի ջանքերով Ասկերանում, Շահ Բուլաղում և այլուր ռուսական դնդերը փրկվեցին անխուսափելի ոչնչացումից[28]։ Եվ այն ժամանակ, երբ հայերը, զսպելով նվաստացումը, անօրինակ սխրագործություններով դյուրացնում էին ռուսական զորքերի համար ստեղծված աննպաստ պայմանները, 1806 թ. փետրվարին Բաքվի պատերի տակ դավադրաբար սպանվեց իշխան Ցիցիանովը, որի մահը նոր ընդվզումներ առաջացրեց Այսրկովկասում։ Ռուսներին նախկինում հավատարմություն հայտնած այսրկովկասյան խաները, ջանալով վերականգնել իրենց անկախությունը, հեռացրին կամ ոչնչացրին ռուսական-սակավամարդ զորամասերը։ Նույն քայլին փորձեց դիմել նաև Իբրահիմ խանը, որը մոռանալով Քուրակչայում ռուսներին տված հավատարմության երդումը, Շուշին հանձնելու և ռուսական զորաբաժինը ոչնչացնելու նպատակով գաղտնի բանակցություններ էր վարում Աբաս Միրզայի հետ։ Ավելին, Ֆաթալի շահին վստահություն ներշնչելու համար նա իր դուստրերին կնության է տալիս շահի որդիներին, փոխարենը ստանալով առատ նվերներ։ Այդ դավադրությունը բացահայտվեց Մելիք Ջումշուդի միջոցով։ Եվ երբ պարսից զորքերին դիմավորելու համար Իբրահիմը դուրս էր եկել Շուշիից՝ սպանվեց ռուս զինվորների կողմից։ Խորհրդանշական է, որ երդմնազանց խանն իր մահկանացուն կնքեց Քուրակչայի դաշնագրից ուղիղ մեկ տարի անց՝ 1806 թ. մայիսին։ Այսքանից հետո էլ Ռուսաստանը, հավատարիմ Քուրակչայի պայմանագրին, չվերացրեց խանությունը, այլ Շուշիի խան կարգեց Իբրահիմի որդի Մեհտի Ղուլիին, որը «հորից ժառանգել էր նրա ամբողջ խորամանկությունը, երկդիմությունը, ուխտանենգությունն ու անգթությունը»[29]։ Նորից անտեսվեցին հայ մելիքների օրինական իրավունքները, որոնք Քուրակչայից հետո էլ շարունակում էին հավատարմության օրինակներ ցույց տալ ռուս զորքերին։ Իսկ Մեհտի Ղուլին, իր հոր արժանավոր զավակը, նույնպես լքեց ռուսներին, 1822 թ. ճողոպրելով Պարսկաստան։ Նույն թվին Ռուսաստանը վերջ դրեց խանությանը և Ղարաբաղում մտցրեց ռուսական կառավարություն։ Այս քայլով Ռուսաստանն ինքն էր խախտում Քուրակչայի դաշնագիրը, որի 2-րդ և 5-րդ հոդվածներով կայսրությունը պարտավորություն էր ստանձնել խանական իշխանությունը մշտնջենական դարձնել Իբրահիմի և նրա հաջորդների համար։

Ընդհանրացնենք. XIX դ. սկզբներից Ռուսաստանը դիմադարձ կատարեց նախորդ դարաշրջանում հայերին բազմիցս տված շռայլ խոստումներից, երբ պարտավորվում էր իր հովանու ներքո Ղարաբաղում ստեղծել պետական մի կազմավորում, որը կդառնար հայկական ապագա մեծ պետության միջուկը։ Այժմ, XIX դարասկզբին, իրավիճակը փոխվել էր, ինչը թելադրում էր Ռուսաստանին՝ «քաղաքական սիրախաղ» սկսել Ղարաբաղում իրական տեր դարձած Իբրահիմ խանի հետ ու հարգել կատարված փաստը։ Եվ կնքելով Քուրակչայի պայմանագիրը, Ռուսաստանը, ինչպես հատուկ է բոլոր տերություններին, ելնում էր կոնկրետ իր պետական շահերից։ Հակառակը հնարա-

---

27 В. Потто, Утверждение..., с. 200.

28 Ս անրամասն տե՛ս В. Потто, Первые добровольцы Карабаха, Тифлис, 1902, с. 13—28.

29 Լ ե ո, նշվ. աշխ., էջ 296։

վոր չէ պատկերացնել։ Եվ զարմանալի ոչինչ չկա, երբ քաղաքակրթությունը և քրիստոնեությունը տարփողող հզոր մի պետություն զոհաբերում է մի ժողովրդի, որն անմնացորդ նվիրվածություն ուներ իր նկատմամբ։ Ռուսաստանը, օրինականացնելով խանական տիրապետությունը. հետապնդում էր կոնկրետ հետաքրքրություններ. Ղարաբաղում խանի և մելիքների միջև պայքարն ավարտված է հօգուտ առաջինի, որը բազմիցս խաբելով ու մոլորեցնելով ռուսներին, ստեղծված իրավիճակում պատրաստվում էր ընդունելու նրանց հպատակությունը։ Դա լրիվ բավարարում էր Ռուսաստանին։ Չէ՞ որ խաղաղ, քաղաքական ճանապարհով ձեռք բերած հաղթանակը գերադասելի էր անհայտ ելքով պատերազմից, և կարիք չկար հայության համար մտնել ավելորդ գլխացավանքի մեջ, մանավանդ, որ նեղացնելով վերջինիս, նրան դարձնում էր ոչ թե իր թշնամի, այլ նույնքան ջերմեռանդ, այդուհանդերձ վիրավորված, «հայրական» ապտակ ստացած բարեկամի։ Իսկ թշնամի խանի իղձերն արտահայտելով՝ նրան կտրում էր Պարսկաստանից և դարձնում իր կամարտահայտիչը, հաշվարկ, որը տեղավորվում է ձևական տրամաբանության շրջանակներում։ Այլ բան է, որ Ռուսաստանն այդպես էլ հասու չեղավ մինչև վերջ ընկալելու արևելյան, ասիական «բարեպաշտության» ողջ կեղծությունն ու նենգությունը և Քուրակչայից ու հետագա նման բաղմաթիվ գործարքներից ոչինչ չշահեց այնքանով, որքանով որ հայությունը կորցրեց շատ բան։

К ВОПРОСУ О КЮРЕКЧАЙСКОМ ДОГОВОРЕ

В. А. АКОПЯН

Резюме

Начиная с конца XVIII в. Россия отказалась от освободительной идиллии екатерининской эпохи, развеяв иллюзии армян. Ярким выражением этого явилось заключение в 1805 г. Кюрекчайского договора, который на целое столетие предал забвению надежду карабахских армян на политическую свободу, связанную с передовой Россией. Этот договор возвестил об окончании борьбы карабахского хана с истинными владетелями региона—армянскими меликами, длившейся на протяжении более чем 50 лет и развеявшей последнюю надежду армян на политическое самоопределение (Хамса), сняв тем самым с повестки дня вопрос о восстановлении армянской государственности.